ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«17» սեպտեմբերի 2024թ. № 190

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 153-1 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 23.12.2019 թվականի թիվ 153-1 որոշման՝ «ՍԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը «ԲՈԳԵՄԱ-ՍԱՎ» ՍՊ ընկերության, «ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ» ՍՊ ընկերության, Ա/Ձ Ռուբեն Հարությունյանի և Ա/Ձ Մարինե Ավետիսյանի հետ համարվել է փոխկապակցված և ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործող, ինչի արդյունքում 2022-2023 թվականներին չէր կարող համարվել շրջանառության հարկ վճարող: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՀՀ ՊԵԿ հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության 24.07.2024թվականի թիվ 3228615 արձանագրությամբ «ՍԱՎ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանն առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն 60121108 ՀՀ դրամի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 23.12.2019 թվականի թիվ 153-1 որոշման դեմ 2020թվականին ներկայացվել է դիմում-բողոք և Հանձնաժողովի 25.02.2020 թվականի թիվ 11/22 որոշմամբ դիմում-բողոքը մերժվել է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 23.12.2019 թվականի թիվ 153-1 որոշման կայացման համար հիմք հանդիսացող ՀՀ ՊԵԿ ՀՕՀՎ վարչության զեկուցագրի և Հանձնաժողովի որոշման հիմքում դրված է ՀՀ ԿԱ պետական

եկամուտների կոմիտեի նախագահի 15.02.2018 թվականի թիվ 65-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը: Նշված ենթակետերը ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/7463/05/21 վարչական գործով 23.03.2023 թվականին կայացրած որոշմամբ ճանաչվել են անվավեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտերը պաշտոնական հրապարակման պահից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում պարտադիր են բոլորի համար:

Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր իրավաբանական ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի դատական ակտի պաշտոնական հրապարակման պահից (ex nunc), բացառությամբ երբ նորմատիվ իրավական ակտը վարչական դատարանի կողմից անվավեր է ճանաչվում այդ ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի որոշման պաշտոնական հրապարակումից հետո չկատարված անհատական, ներառյալ՝ դատական ակտի կատարումը անհապաղ դադարեցվում է այդ ակտն ընդունելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշմամբ՝ տվյալ մարմնի նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձանց պահանջով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի, բացառությամբ Սահմանադրության, գործողությունը դադարեցվում է նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու դեպքում.

Այսպիսով՝ հաշվի առնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 23.12.2019թվականի թիվ 153-1 որոշման կայացման համար հիմք են ընդունվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 15.02.2018 թվականի թիվ 65-Ն հրամանով սահմանված կարգի 2-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը, որոնց ոչ իրավաչափ լինելը հաստատվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն վարչական դատարանի որոշման պաշտոնական հրապարակումից հետո անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված չկատարված

անհատական իրավական ակտերի գործողությունը անհապաղ դադարեցվում է այն ընդունող պետական մարմնի նախաձեռնությամբ, ուստի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 23.12.2019թվականի թիվ 153-1 որոշումը ենթակա է անվավեր ճանաչման:

Հետևաբար, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, 2-րդ մասով, 67-րդ հոդվածով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 153-1 որոշումը:

2. Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատերերին իրազեկելու նպատակով հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքում:

9/17/2024

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731 ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ